եգիպտ չարիս, և զի ինքն չէր տուեալ պատճառս ինչ ա-
պարտելոյ զգաշնն, նմին իրի եդ 'ի մտի բառնալ 'ի միջոյ
զկեանս Աթաբէկին. յայտ արար ամենեցուն թէ՝ 'ի թա-
գաւորական հրովարտակին տուեալ յԱպպասեան Խալի-
փայութենէ, պարունակէ զեգիպտոս և զբովանդակ Ասո-
րիս, մի միայն խորշելով յաւթէ կատարածի Իսլամաց՝ թո-
ղեալ էաք զկողմանս Բերիոյ Աթաբէկին. իսկ նա դաշ-
նակցեցաւ ընդ Խաչակիրս 'ի կորուստ Իսլամաց. ուստի
հարկ եղեւ ձգել զնա օրինօք յիշխանութենէ։ Զկնի այսր
հրատարակութեան եմուտ Սալահատտին զօրօք յԱսորիս,
և զամս չորս տուեալ պատերազմ անընդհատ, էառ զքա-
ղաքս և զբերդս մինչեւ 'ի Տիգրանակերտ, նաեւ զերկիրն
Իզզէտտինի. անձնատուր եղեւ նմա և Բերիա. զԱմատա-
տին կացոյց իշխան Սենճարայ, պաշարեաց զՄուսուլ.
բայց նախ քան զառնուլ քաղաքին՝ անկաւ խօթ 'ի մահիճս,
եւ պայման հաշտութեան ընդ Իզզէտտինայ. այսպէս
յայսկոյս Եփրատայ տիրել Սալահատտինի, եւ յայնկոյս
գետոյն մնալ 'ի ձեռս Իզզէտտինի, եւ լինել հարկատու
Սալահատտինի։ Ցերկարել խռովութեանցս այսոցիկ իշ-
խանք Խաչակրաց պարապ գտեալ՝ բռնացան յամենայն
կողմանս երկրին Իսլամաց. զի 'ի սմին ժամանակի յափանց
Միջերկրական ծովուն մինչեւ 'ի սահմանս Հայաստանի
լցեալ էր պատերազմաւ և արիւնհեղութեամբ։ Սալահատ-
տին խորհէր 'ի միտս իւր յետ պատերազմին Սէյֆէտ-
տինի, դարձուցանել զբովանդակ զօրութիւն իւր 'ի վե-
րայ քրիստոնէից. սակայն միջնորդութիւն դեսպանի Պա-
պին Հռոմայ արգել զնա 'ի խորհրդոյն. Նախապատիւ
վարկաւ զխաղաղութիւնն սիրով, քան տիրել քաղաքաց
խռովութեամբ. ուստի վերստին եդ դաշինս ընդ Գուի-
տոն թագաւորին Երուսաղէմի, պայմանաւ զամս չորս
թոյլ առնել զինուց։ Սակայն չեւ եւս բոլորեալ շրջան ա-
ռաջին ամի պայմանին, իշխանն Քերաքի Ռընալտ տը Շա-
թիյեօն, յարձակեալ 'ի վերայ կարաւանի ուխտաւորացն
Իսլամաց, որ անցանէր մերձ 'ի սահմանս երկրին իւրոյ,
աւարի էառ զնա։ Սալահատտին բողոք կալաւ առ թագա-
ւորն Երուսաղէմի՝ և խնդրեաց տալ զգերեալսն եւ ածել
պատուհաս 'ի վերայ յանցաւորին։ Իբրեւ ետես թէ ա-